# Մայիսի 9-ը Մեծ հաղթանակի օրն է

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ, ԹԻԿՈՒՆՔԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՄԵՐ ԹԵՐԹԻ ԲՈԼՈՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ ՄՐՏԱՆՑ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հաղթանակի տոնը մեզ համար անչափ թանկ է, վեհափառ ու վեհաշուք: Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակը պահանջեց մեր ժողովրդի ֆիզիկական և հոգևոր ուժերի աննախադեպ լարվածություն, բանակայինների անօրինակ հերոսություն, թիկունքի աշխատողների ինքնազոհություն:

Հաղթանակը ձեռք է բերվել մեր անձնայրածիր երկրի քաջարի ժողովրդի հսկայական ջանքերի շնորհիվ: Պատերազմի դաժան տարիներին մեր փիձվորները մարտնչեցին քաջաբար, իրենց արյան և կյանքի գնով ապահովեցին հայրենիքի ազատությունն ու անկախությունը: Ռազմաճակատ գնացած տղամարդկանց աշխատանքի ճակատում փոխարինեցին կանայք, ծերերը և պատանիները: Ամեն բան արվում էր հաղթանակի համար: Անդադրում աշխատանքը դարձել էր կյանքի նորմա: Եվ հաղթանակը ձեռք բերվեց:

Մեծ հայրենականի յուրաքանչյուր փինվորի անունը ոսկե տառերով է գրված Ռուսաստանի պատմության, համայն մարդկության պատմության մեջ: Եվ ինչքան հեռանում ենք մեզանից այն ահեղ տարիները, այնքան ավելի է վեհանում ու խորն ընկալվում մեր մարդկանց սխրանքի մեծությունը: Պատերազմի տարիներին ժողովրդի կատարած մարտական և աշխատանքային սխրանքի փառքը չի խամրի առհավետ:

Հաղթանակի ձեռք բերման գործում իրենց արժանի մասնակցությունը ցուցաբերեցին նաև մյասնիկյանցիները: Պատերազմի տարիներին խիզախորեն և արժանապատվությամբ մարտնչեցին ավելի քան չորսուկես հազար մյասնիկյանցիներ, որոնց համարյա կեսը տուն չվերադարձան՝ իրենց կյանքը զոհելով հանուն հայրենիքի ազատության, հանուն ժողովրդի ապագայի:

Մեր ճակատայինները արժանացել են բազմաթիվ մարտական պարգևների, մյասնիկյանցիների թվում կան նաև Սովետական Միության հերոսի և Ռուսաստանի հերոսի բարձրագույն կոչման արժանացածներ՝ Վասիլի Իվանովիչ Չեռնենկոն, Ալեքսեյ Լեոնտևիչ Կրիվոնոսը, Լազար Սերգեևիչ Չափչախովը, Սուրեն Համբարձումի Թաշչիյանը: Մարտերում ցուցաբերած արիության և խիզախության համար Փառքի շքանշանի երեք աստիճանների է արժանացել Ամենակ Արսենի Հովհաննեսյանը: Իրենց գլուխը Մյասնիկյանի շրջանի հողի վրա են զոհել Սովետական Միության հերոսներ Սերգեյ Մամբրեի Օհանյանը, Սերգեյ Վասիլևիչ Վավիլովը, Կուզմա Եգորովիչ Սելիվերստովը:

Հաղթանակի օրը ամենապայծառ տոնն է մեր մարդկանց համար, որը ցնծություն և ուրախության արցունքներ է բերում, թանկագին հուշ է ամեն մի ընտանիքում, ամեն մեկի սրտում պահված: Այն միավորում է մեզ և դարձնում անհաղթելի ամեն մի փորձության հանդեպ:

Մեր սրբազան պարտքն է հիշել, թե ինչպիսի հսկայական գնով ձեռք բերվեց հաղթանակը: Մենք պարտավոր ենք հարգել զոհվածների հիշատակը և առավել հոգատարություն ցուցաբերել պատերազմի մասնակիցների հանդեպ, ամեն հարցում օգնել ու աջակցել, էլ ավելի բարելավել նրանց կյանքի պայմանները: Հանուն ազատության և հաղթանակի մենք եղել ենք և մնում ենք որպես մեկ մեծ ընտանիք: Ավագ սերնդի կողմից ձեռք բերված հաղթանակը այսօր էլ ոգևորում է մեզ, մղում նոր սխրանքների, օգնում հաղթահարել դժվարությունները և առաջ գնալ: Հպարտորեն հիշելով հայրենիքի քաջարի պաշտպանների անօրինակ սխրանքի մասին, մենք պարտավոր ենք էլ ավելի ակտիվացնել երիտասարդության հետ տարվող հայրենասիրականդաստիարակչական աշխատանքը:

Շնորհավո՛ր ձեր տոնը, հարգելի բարեկամներ: Ամենքիդ էլ ցանկանում ենք ամուր առողջություն ու բարօրություն և աշխարհին՝ խաղաղություն:

## ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՀԱՅԱԶԳԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԸ



### ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ
Սովետական Միության մարշալ

Սովստական Միության կրկնակի հերոս, մարշալ Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանը ծնվել է 1897 թ. դեկտեմբերի 2-ին Ելիզավետպոլի գավառի Չարդախլու գյուղում: Սովորել է Թիֆլիսի երկաթուղային ուսումնարանում: Զինվորական ծառայությունն սկսել է 1915-ին ռուսական էքսպեդիցիոն կորպուսում: 1917թ., ավարտելով պրապորշչիկների դպրոցը, նորից մեկնել է ռազմաճակատ և հայկական հրաձգային գնդի կազմում կռվել թուրքական բանակի դեմ: Ապա ավարտել է հրամկազմի կուրսեր, ռազմական ակադեմիաներ:

Հայրենական մեծ պատերազմի սկզբում եղել է Հարավ-Արևմտյան ռազմական օկռուգի շտաբի պետի տեղակալ, շտաբի պետ: Մասնակցել է Դոնի Ռոստովի ազատագրմանը, Կուրսկի ճակատամարտին: 1943-ի նոյեմբերին նշանակվել է 1-ին Մերձբալթյան, իսկ 1945-ի ապրիլից՝ Բելոռուսական ռազմաճակատի զորքերի հրամանատար: Մասնակցել է Քյոնիգսբերգի գրավմանը, Պրուսիայում գերմանական զորքերի վերջնական ջախջախմանը:

Պատերազմից հետո եղել է ՍՍՀՄ պաշտպանության մինիստրի տեղակալ, Զինված ուժերի թիկունքի պետ:

Մահացել է 1982 թվականին:



### ՀԱՄԱԶԱՍՊ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ

Ծնվել 1906 թվականի փետրվարի 2-ին Չարդախլու գյուղում: 1929թ. ավարտել է հայկական միացյալ ռազմական դպրոցը: Եղել է գումարտակի հրամանատար: 1938-ին Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը նշանակվել է գնդի հրամանատարի տեղակալ, մասնակցել է սովետա-ֆիննական պատերազմին:

1941-1942 թվականներին նա մասնակցել է Մոսկվայի պաշտպանության, Բրյանսկի և Հարավային ռազմաճակատների մարտական գործողություններին: Եղել է մեքենայացված բրիգադի հրամանատար և մասնակցել Հյուսիս-Արևմտյան ռազմաճակատի գործողություններին: 1944թ. ապրիլին Բաբաջանյանին շնորհվել է Սովետական Միության հերոսի կոչում:

1944-1945 թվականներին որպես տանկային կորպուսի հրամանատար մասնակցել է 1-ին Բելոռուսական ռազմաճակատի գործողություններին:

Պատերազմից հետո Բաբաջանյանը ավարտել է Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան և վարել պատասխանատու պաշտոններ: 1959-67-ին եղել է Օդեսայի ռազմական օկռուգի հրամանատար, ապա Մալինովսկու անվան զրահատանկային զորքերի ակադեմիայի պետ, 1969-ից՝ ՍՍՀՄ տանկային զորքերի պետ:

Մահացել է 1977թ. նոյեմբերի 1-ին:



### ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍԱԿՈՎ
Սովետական Միության նավատորմի ծովակալ

Սովտական Միության հերոս, ԳԱ թղթակից անդամ Հովհաննես Ստեփանի Իսակովը ծնվել է 1894թ. օգոստոսի 22-ին Կարսի մարզի Հաջիքերդ գյուղում: 1913-ին ավարտել է Թիֆլիսի ռազմական ուսումնարանը, 1917-ին սովորել է Պետերբուրգի ռազմական կուրսերում:

Նավատորմում ծառայել է 1918-ից: 1928թ. ավարտել է Լենինգրադի ռազմածովային ակադեմիան, 1929-ին նշանակվել Կարմիր բանակի գլխավոր շտաբի ծովային սեկտորի պետ, 1937-ին՝ Բալթիական նավատորմի հրամանատար: 1938-1946 թվականներին եղել է Ռազմածովային ուժերի շտաբի պետը, ժողկոմի առաջին տեղակալ: Ծովակալի կոչում նա ստացել է 1940 թվականին:

Նա մեծ ներդրում ունի պատերազմի ժամանակ նավատորմերի մարտական գործողությունների մշակման, ծովափնյա պաշտպանության կազմակերպման գործում: 1942թ. Տուապսեի շրջանում վիրավորվել է, բայց մնացել է մարտական դիրքերում ռազմածովային ուժերի Գլխավոր շտաբի պետի պաշտոնում:

Իսակովը զբաղվել է նաև նավատորմի զարգացման հեռանկարային հարցերով: Եղել է Ծովային ատլասի խմբագրական կոլեգիայի նախագահ:

Մահացել է 1967թ. հոկտեմբերի 11-ին:



### ՍԵՐԳԵՅ ԽՈՒԴՅԱԿՈՎ (ԱՐՄԵՆԱԿ ԽԱՆՓԵՐՅԱՆՑ)
ավիացիայի մարշալ

Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Արտեմի Խանփերյանց) ծնվել է 1902թ. հունվարի 7-ին, Լեռնային Ղարաբաղի Մեծ Թաղլար գյուղում: 1916-ին տեղափոխվել է Բաքու, աշխատել նավթահանքերում: 1917 թ. մտել է Կարմիր գվարդիայի շարքերը և մասնակցել թուրքական բանակի դեմ մղված մարտերին:

1920-1921-ին 11-րդ բանակի շարքերում մասնակցել է Անդրկովկասում մղված մարտերին: 1923թ. Թիֆլիսի հեծելազորային ռազմական դպրոցն ավարտելուց հետո նշանակվել է Իկյասլավ քաղաքի հեծյալ գնդի դասակի հրամանատար, զորամասի շտաբի պետ:

1936-ին ավարտել է Մոսկվայի ռազմա-օդային ուժերի ակադեմիան, պաշտոնավարել Բելոռուսիայում: 1941-ի հոկտեմբերի 29-ին նրան շնորհել են ավիացիայի գեներալ-մայորի կոչում, նշանակել Արևմտյան ռազմաճակատի ռազմաօ-դային ուժերի հրամանատար:

Ճապոնիայի դեմ մղված պատերազմում Խուդյակովը 12-րդ օդային բանակի հրամանատարն էր, ապա նշանակվեց փինվորական օկռուգի ռազմաօդային ուժերի պետ: 1945 թ. դեկտեմբերին ավիացիայի մարշալ Խուդյակովը զրպարտվեց և ձերբակալվեց, 1950 թ. ապրիլի 18-ին գնդակահարվեց: